

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԲՈՇԱՅ ԱՆՈՒԱՆ ՇՈՒՐՋ

ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆԵԱՆ

Դարերու ընդմէջէն մեզ հետ քալող հայ բոշան, մեր պատմութեան ընթացքին, շատ հեղ յիշուած ու միշտ ապրած է մեզ հետ. մեր ցաւերուն, ուրախութեանց մէջ մենէ անբաժան: Ան ինքզինքը հայ նկատելով՝ իրացուցեր է ցեղէն շատ մը յատկութիւններ կամ ժամանակի ընթացքին խառնուրդ ու նոյնացեր է մեզ հետ...:

Առաքել Բէշեան

Բազմադարեայ իր պատմութեան ընթացքում՝ յաճախ զրկուած լինելով պետականութիւնից եւ մշակութային կեանքի համար անհրաժեշտ նոյնիսկ տարրական պայմաններից, հայ ժողովուրդը ոչ միայն այնքան տոկուն է գտնուել դիմակայելու բռնի ուժացման մշտնջենական սպառնալիքներին, այլ նաեւ կարողացել է խաղաղ ճանապարհով իր մէջ տարրալուծել բազմաթիւ օտար հանրոյթների: Ահա սրանցից մէկն էլ մօտաւորապէս մ. թ. առաջին հազարամեակի սկզբներին Հնդկական թերակղզու հիւսիս-արեւմտեան շրջաններից դուրս եկած եւ, ըստ ամենայնի, ԺԱ.-ԺԲ. դարերում Պատմական Հայաստանի տարածքում յայտնուած «Թափառական» յորջորջումը կրող հանրայայտ ժողովրդի՝ գնչուների, մի մասն էր¹, որի հիմքի վրայ էլ յետագայում ծնունդ առաւ բոշայ, հայ-բոշայ կամ մաղագործ հայ անուաններով յայտնի՝ այժմ արդէն էթնիկ ինքնութեան բոլոր չափանիշերով հայ ժողովրդի անքակտելի հատուածներից մէկը²:

Արդի գրական հայերէնում գործածական գնչու անունը, որը նշանակեալն է ընդհանրապէս բոլոր գնչուների, կազմուած է բնաձայնական գնչել «կակազել, թլուատի պէս խօսել, մաքուր չարտասանել» բայից: Գրաբարում այն վկայուած է ոչ միայն գնչու, այլեւ գնչուտ, գրնչնոտ տարբերակներով, որոնք, չկրելով որեւէ էթնիկ լիցք, լոկ նշանա-

կում էին «կակազ, թլուատ, թոթով, կմկմացող», եւ միայն բառի երկրորդական իմաստային զարգացման արդիւնքում արդէն նոր ժամանակներում ի յայտ եկաւ որպէս ցեղանուն³:

Հայերէնի տարբեր բարբառներում գնչու իմաստով, ինչպէս նաեւ ածականաբար՝ կիրառւում են հետեւեալ փոխառեալ բառերը.

Մըթուրբ, մըտուրբ, մըռթըր, մըթըրուր (Պոյ, Մուշ, Վասպուրական, Տիգրանակերտ) - նշանակում է նաեւ «պնդերես, գծուծ, փնթի, արհամարհելի, ստոր» < քրդ. mitrib, mirtib, mirtiv, midrep, mirtov, mitrüb, mutruf, թրք. mütürb, mütürp, mitrip: Թուրքերէն եւ քրդերէն ձեւերը իրենց հերթին սերում են արբ. بڑا mitrib «նուազածու, երգիչ» (< بڑا tärb «ուրախացնել երգով եւ երաժշտութեամբ») բառից: Քրդերէնի հիւսիսային բարբառներում, բացառութեամբ որոշ շրջանների, այս անունը կիրառւում է ընդհանրապէս գնչուական բոլոր խմբերի համար⁴: Ըստ Շոպէնի՝ Հայկական Մարզում myutrup էին կոչւում սուլնի մահմեդական գնչուները⁵:

Ջինգյան, ջրնգյան, ջինգյան (Վասպուրական, Ալաշկերտ) - նշանակում է նաեւ «թափառաշրջիկ, դատարկապորտ, ուզուոր» < թրք. բրբռ. cingân, թրք. çingene, օսմ. چنگه çinkâne (հմմտ.՝ հարաւային քրդ. چنگه cingane): Գրական ճանապարհով թուրքերէնից հայերէնին անցած չինկեանէ ձեւը ԺԹ. դարի գրականութեան մէջ յաճախ է հանդիպում «գնչու» իմաստի համար: Կարծիք կայ, որ թուրքերէն տարբերակը, ինչպէս նաեւ եւրոպական լեզուներում տարածուած tsigan (> խօսակցական արեւելահայերէն ցիգան), Tsigane, Zigeun, Zingaro, Czigán, Tigan ձեւերը սերում են յունարէն Αθιγγανοί կամ Ατσιγγανοί «անձեռնմխելի, անդիպելի, պիղծ» բառից, որը սկզբնապէս տրւում էր հերձուածողական մի աղանդի, որի ներկայացուցիչների հետ յաճախ շփոթում էին Բիւզանդիայում նոր-նոր յայտնուած գնչուներին⁶: Ըստ մէկ այլ տեսակէտի, այն պէտք է բխեցնել նախկինում Հինդոս գետի ափերին բնակուած Čangar կամ Zingar ցեղի անուանումից⁷:

Ղարաչի (Երեւան, Լոռի, Գանձակ) - նշանակում է նաեւ «աղմկաբար, լիրբ, անզգամ» < աղբ. garaçi (հմմտ.՝ քրդ. qerec, թրք. բրբռ. karaçi): Թիւրքական բոլոր ձեւերը բխում են ջաղաթայերէն قاراجی qarāçî «ծառայ», բառացի՝ «սեւ գործ կատարող» (< թիւրքական qara «սեւ» եւ

ՇԻ «մասնագիտութիւն, գործչի անուն ցոյց տուող վերջածանց»): Ըստ Շոպէնի, Հայկական Մարզում karachi էին անուանուում շիա մահմեդական գնչուները⁸:

Լորիկ⁹ (Մուշ, Տուրուքերան) < պրս. *rōrī[g] նախաձեւից՝ հայերէն -իկ (< միջին պրս. -īk) վերջածանցի ազդեցութեան տակ բառավերջի բաղաձայնի խլացմամբ: Բառը, անկասկած, գնչուների իրանում տարածուած ամենավաղ նշանակելներից է. հմմտ.՝ արդի պրս. لولی luli, դաս. پوری lōrī, لولی lōlī, որոնցից բելուշերէնում ունենք lōlī, իսկ արաբերէնում՝ پوری nūrī (յոզնակի՝ نوار nawār) ձեւերը: Պարսկերէն ցեղանունը յանգում է *arōrī[g]/*alōrī[g] նախաձեւին, որը բխում է միջնադարեան արաբալեզու աղբիւրներում رور al-Rūr / رور Arūr անունով յայտնի Սինդ-հի նշանաւոր քաղաքներից մէկի անուանումից¹⁰:

Արդալ¹¹ (Կեսարիա) < թրք. abdal, aptal «չըջիկ դերուհշ, Թափառաշըջիկ, Փոքր Ասիայի գնչուական կամ գնչուանման որոշ ցեղերի անուանումը»¹²: Ածականաբար կիրառուելիս թուրքերէնում այն նշանակում է նաեւ «յիմար, ապուշ, խեւ», թուրքերէն ձեւը, ըստ երեւոյթին, սերում է պրս. ابدال abdāl «արդալ՝ սուֆիական որոշ եղբայրակցութիւններում տարածուած յարգալից տիտղոս, սրբեր, մարգարէի մտերիմներ, ազնուարարոյ մարդիկ, մարդկանց օգնութեան հասնող էակներ» բառից, որն իր հերթին յանգում է դաս. արբ. بدال badal կամ بادل badīl «չըջիկ, ազնուարարոյ մարդ, սուրբ» եզրի բեկեալ յոզնակիի ابدال abdāl ձեւին: Անշուշտ, հնարաւոր է նաեւ, որ բառը թուրքերէնում յայտնուած լինի ուղղակի արաբերէնից: Հայկական աղբիւրներում յիշեալ ձեւը վկայուած է աւղալ, արդալ, ապտալ տարբերակներով եւ նշանակում է «ճգնաւոր, մենակեաց, դերուհշ»:

Սեփական գաղտնալեզուով՝ բոշայերէնով կամ ինչպէս իրենք են այն կոչում լոմալերէնով¹³, հայ-բոշաները իրենց անուանում են lom կամ lomav (յոգ.՝ lomavtik՝, lomavner)՝ մի անուն, որը արեւմտեան գնչուների rom (յոզնակի՝ roma) եւ ասիական գնչուների dom (յոգ.՝ doman) ինքնանուանումների հետ միասին յանգում է սանսկրիտեան domba «երաժիշտների եւ երգիչների ցածր կաստայի ներկայացուցիչ» եզրին:

Հայերէնում համատարած կերպով նրանց տրուող բոշայ անուան ամենավաղ գրաւոր վկայութիւնը, ինչքան մեզ յայտնի է, հանդիպում է 1597ին կեսարիայի կասի գիւղում ումն Յովհաննէսի կողմից արտագրուած մի առձեռն Շարակնոցի յիշատակարանում, որն այժմ պահոււմ է Երուսաղէմում. «Գրեցաւ շարակնոցս ի լաւ եւ յընդիր արիւնակէ որ կոչի Խըլկցի, ձեռամբ ... Յովհաննէսի ... ի յերկիրն Ղայսարի, ի գիւղն որ կոչի Կասի, ընդ հովանեաւ սրբոյս որ զանունն չգիտեմ, ի թուին ՌԽԶ [=1597] Օգոս. ԻԴ [=14]. եւ յիշատակ է Մահտեսի Բոշայ Խստանին եւ իր դեռաբողբոն որդւոյն, Տումանին, Աթումին, Կիրակոս սարկաւագին, եւ մաւրն Կուլվարդին եւ Խստանին եղբարցն...»¹⁴:

Բոշայ գրութեամբ այն վկայուած է նաեւ 1619-25ին գրի առնուած Սիմէոն դպիր Լեհացու Ուղեգրութիւն գրքի արեւորդիներին նուիրուած հատուածում. «Ձայս իմացեալ պէկլերպէկի մի, կոչեաց զմոսա, զի անդ է բանն Արեւորդաց, որպէս յԱրգրում բոշայք, եւ պատվիրեաց մի երթալ անդ»¹⁵:

1634-40ի ընթացքում գրուած իր Ժամանակագրութեան մէջ այս անունը յիշատակում է նաեւ Գրիգոր Դարանաղցին. «Եւ յայնմ ժամանակին որ ութն էին, զմացաք ի նոյն գեղն, որ Վայսաձոր ենք կոչեր զնա վասն վնասակարութեան օղոցն, նա՛ տեսաք՝ որ այն զինամոլ կինն անդ է եւ մեր փեսային մէկ բոշայ մշակ կայ՝ նմա կին եղեր: ... Լսեց բոշէն մեզ եւ եթող զշուն կինն զայն. նա՛ թուրքացաւ տղայովն եւ ելեալ կորաւ»¹⁶:

Յովհաննավանքի սարկաւագ Զաքարեայ Քանաքեռցին եւս 1699ին աւարտին հասցուած իր Պատմագրութիւն երկում երկու տարբեր ուղղագրութեամբ յիշում է բոշայ անունը. «Եւ ժողովեալ մանկունս ՚ի Ի [=20] ազգաց, որք գտան յԱսպահան. որք են ՚ի քրիստոնէից է [=7] ազգ, եւ յայլ ազգաց ԺԴ [=13]: Նախ ՚ի քրիստոնէիցն՝ այսոքիկ են. Հայ, Յոյն, Լատին, Ասորի, Վիր, Աղուան, Բոշայ: ... Եւ նոքա կալան այր մի՛ Բոշայ ազգաւ, եւ ասացին նմա, հա՛ր զդա քարամբ՝ զի մեցի: Եւ նա ո՛չ եհար: Եւ եղին ՚ի ձեռն նորա զծայր չուանին՝ եւ ասեն, քարշեա՛ զդա. եւ ո՛չ կալաւ զշումն. եւ հարին զԲոշայն այնքան մինչեւ եղել կիսամահ. եւ թողին զնա»¹⁷:

Ընդամէնը մի քանի տասնամեակ անց Աբրահամ Երեւանցին, պատմելով Օսմանեան զօրքերին 1724ին երեւանցիներիցոյց տուած դիմադրութեան մասին, բացառիկ տեղեկութիւններ է հաղորդում հայ-բոշա-

ների եւ, մասնաւորապէս, Երեւանում նրանց թուաքանակի եւ տեղա-
րաշխման մասին¹⁸։ «Չորայգեղցի Գրիգոր վարդայպետն, ինչափ որ
ժողովուրդ ունէր, բովան առավ մտալ Չորայգեղայ Սուրբ Սարգիս
վանքն։ ... Իւրեանց պատրաստութիւն տեսին, դրկեցին, Կոնտի թաղ
կասեն, որ հարիւր տուն բոշայ կայ, քրիստոն մեծ մեծ իշխանք, գան-
ձայ տեր բոշեք։ Մինն որ է Բաբուն օղլի Ղազարն, մէկն Կլոուզն, մէկն
Դաւիթն, մէկն Բէյրամն, մէկն Պետիքն։ Այս հինգ բոշէս բովայտակի
բոշէքանց մեծայորքն են։ Բոշէքն եկան վարդայպետին մոտ։ Վար-
դայպետն Գրիգոր աստուածայքան, ըսկսեաց աղաղակ, աղաղակել
ժողովուրդին, լալով աչքով աղերսալի։ Բոշայ Ղազարն ասաց. «Վար-
դայպետ, երկու հարիւր պատվայկան մարդիք ունիմ, իւրանց քրեթովն,
իւրանց թվանքներովն։ ... Այսպէս յառայվօտուն լուսայցալ շաբաթ
օրն, բոշայ Ղազարն, բոշայ Կլոուզն, բոշայ Դավիթն, Պետիկն, իւր-
եանց հօգօրովն եկին Չորայգեղ, որ ունին սոգանք հօգօր ունին ԲԾԼԴ
[=234]։ Հրայման յետ Գրիգոր վարդայպետն բոշէքանց, թէ. «Դուք
պահեցեք» Խ [=40] ջաղացի ճամայպարն»։ ... Բոշէքն պատվայկան
կոխ կանեն. ելալ կոխլ։ ... Էն կովին ԴԾ [=400] հայք, Խ [=40] բոշայ
սրատվեցան, ոչ մեռան, հիվանդացան»¹⁹։

Այսպիսով, վերոյիշեալ սկզբնաղբիւրների աղբատիկ տուեալներից
պարզ է դառնում, որ արդէն առնուազն ԺՁ.-ԺԼ. դարերում Հայ-բո-
շաները բնակւում էին Կեսարիայից մինչեւ Երեւան ընկած տարածքնե-
րում, դաւանում էին քրիստոնէութիւն, եւ նրանցից գոնէ ոմանք, յաղ-
թահարելով սոցիալական անջրպետը, Հասել էին բաւական բարձր Հա-
սարակական դիրքերի։

Գիտնականներին ցարդ չի յաջողուել պարզել բոշայ բառի ստույգ ծա-
գումը²⁰։ Անգլիացի Հնդարիագէտ R. Turner-ը boša կամ poša ձեւերը
րխեցնում է սանսկրիտեան purusa «մարդ, տղամարդ, Հերոս, ծառայ»
բառից²¹, որն, անշուշտ, թէեւ իմաստային առումով Հաւանական է,
րայց Համաձայն Հնչիւնական զարգացման օրէնքների՝ խիստ կասկածե-
լի. սկր. puruṣa > պկր. purusa- կամ պգնչ. *puruš- > լւմ. *purus/*pulus
կամ *pərus(av)/*pəlus(av)՝ ձայնաւորների միջեւ Հնարաւոր r > l,
Հայերէնի ազդեցութեամբ անշեշտ դիրքում u > ə Հնչիւնական
անցումներով եւ լւմ. -av վերջածանցով (< պկր. -ao, -ako); Հմմտ.՝ Հնդ.
puruṣ «տղամարդ, մարդու Հասակ»։

դական անցում, (թէեւ վերջինս կարող էր բացատրելի լինել սկր. ś, ṣ > պկր. > պզնչ. *s > ռոմ. š շարքով), քանի որ š չչականը ռոմանիում առկայ է դեռեւս պարսկերէնից եւ հայերէնից կատարուած վաղ փոխառութիւններում. հմմտ.՝ ռոմ. pošom «բուրդ» < պրս. پوش pašm, ռոմ. doš- < դաս. պրս. دوش dōš- «կթել», ռոմ. phoš, phošik < Հյ. փոշի p'ōši, ռոմ. Vuš < Հյ. վուշ vuš եւն.:

Ի տարբերութիւն ռոմանիի, լոմաւրէնում եւ մասամբ դոմարիում պրոտոգնչուերէնի յիշեալ *š (< սկր. ś, ṣ) բաղաձայնը կանոնաւորապէս փոխուում է šի, որը մեծ հաւանականութեամբ երկրորդական հնչիւնական նորարանութեան հետեւանք է, չնայած, հնարաւոր է նաեւ լոմ., դոմ. s < պկր. s (< սկր. ś, ṣ) անցումը: Դոմարիի պարագայում բացառութիւն են կազմում դոմ. št < սկր. -st^h-, -št-, -ṣt^h-, նոյն բաղաձայնական խմբերում հմմտ.՝ ռոմ. št, լոմ. t' (հմմտ. նաեւ՝ հնդ. t^h-), օր.՝ սկր. *ut-sthita- (հմմտ.՝ utthita) «կանգնած» > պկր. utthiya- > ռոմ. uštילו «կանգնած», դոմ. štir-, լոմ. ut'lu- «կանգնել» (հմմտ.՝ հնդ. ut^h-) եւ մի քանի այլ դէպք:

Ուշագրաւ է, որ ռոմանիում հանդիպում են նաեւ պարսկերէնից եւ յետագայում նաեւ յունարէնից փոխառեալ որոշ բառեր, որոնցում վկայուած է սուլական - չչական անցումը՝ պրս. s > ռոմ. š, օր.՝ դաս. պրս. پست pōst > ռոմ. pošti «մաշկ, մորթի, կաշի», դաս. պրս. بهشا beša կամ բրբռ. veša > veš «անտառ» եւ յուն. σ, ζ > ռոմ. š; օր.՝ յուն. φορεσθα «հագուստ, շոր» > ռոմ. folāšo «գլխաշոր, շալ», καρακαζα > kakaraška «սարեակ» եւն.: Ի դէպ, վերոյիշեալ փոխառութիւններից առաջինում անցումը նկատուում է ռոմ. št < պրս. st բաղաձայնական խմբում:

Ասուածք ընդհանրացնելով, պէտք է նշել, որ Պատմական Հայաստանի տարածք մուտք գործած հայ-բոշաների նախնիների լեզուի բնիկ բառերում, ըստ ամենայնի, դեռեւս պահպանուում էր յետագայում վերջնականապէս s-ով փոխարինուած š չչականը: Եթէ նոյնիսկ համարենք, որ լոմաւրէնի դէպքում մեր դիմաց առկայ է լոմ. s < պկր. s (< սկր. ś, ṣ), այլ ոչ թէ լոմ. s < պզնչ. *š (< սկր. ś, ṣ) անցումը, ապա, առանց դոյզն-ինչ կասկածի, šն գոյութիւն ունէր ներկայիս արեւմտեան գնչուների նախնիների լեզուում²⁸, ուստի եւ զարմանալի չէ, որ այն արտացոլւէր նաեւ հայերէն բոշայ անուան մէջ, որը հայերը կարող էին սկզբնապէս տալ հենց վերջիններին: Բանն այն է, որ մինչ կարնոյ, Արա-

րատեան եւ հայերէնի այլ բարբառներում բոշայ անունը տրուում էր/է բացառապէս նախկին գնչուների հայախօս եւ հայադաւան հատուածին, ժԹ. դ. արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեան մէջ այն գործածուում էր, թէ՛ որպէս հայ-բոշաների, եւ թէ՛ աւելի լայն իմաստով՝ որպէս բոլոր գնչուների ընդհանուր նշանակեալ՝ այսպիսով, փաստօրէն, հանդէս գալով արդի գրական լեզուի գնչու բառի փոխարէն³⁰։ Իմաստային շփոթից խուսափելու համար էլ սրան յաճախ կցուում էին հայ, յոյն, թուրք³⁰ եւ այլ էթնիկական որոշարկիչներ. հմմտ.՝ հայ-բոշայ կամ հայ բոշայ։ Ըստ ամենայնի, բոշայ անունն մասնաւորեցումը նախկին գնչուների մի ճիւղի (որին մենք կոչում ենք հայ-բոշայ) վրայ միայն, արդիւնք է Պատմական Հայաստանի տարածքներում ցաք ու ցրիւ բոլոր գնչուական խմբերին ի սկզբանէ հայերի կողմից տրուած մէկ ընդհանուր՝ բոշայ, ցեղանունն իմաստի յետագայ սահմանափակման։ Այսուհանդերձ, չի կարելի կտրականապէս բացառել նաեւ հակառակ գործընթացի՝ աւելի ուշ ժամանակներում սկզբնական բառիմաստի ընդլայնման հաւանականութիւնը։

Արեւմտահայ արտասանութեամբ՝ boşa ձեւով, բառը փոխառուել է նաեւ թուրքերէնի արեւելեան բարբառներում եւ մինչեւ օրս էլ գործածական է ներկայիս Թուրքիայի տարածքում 1915ի ցեղասպանութիւնից յետոյ մահմեդականացուած, բայց դեռեւս հայկական ինքնագիտակցութեան մնացուկները պահպանող հայ-բոշաների առնչութեամբ։ Boşa ձեւով այն վկայուած է նաեւ հայաստանարնակ եզդիների լեզուում։

Ածականաբար կիրառուելիս, բոշայ հայերէնում ունի «թափառաշրջիկ, դատարկապորտ պնդերես, աներես, մուրացիկ, ուզուոր, թափթփուած, փնթի, անճաշակ» բացասական իմաստները, որը եւ պատճառ է հանդիսացել, որպէսզի իրենք՝ հայ-բոշաները, խուսափեն այս բառը սեփական նշանակեալի դերում օգտագործելուց՝ նոյնիսկ, ինչ-որ առումով, տաբուաւորելով այն։ Այսուհանդերձ, մտերմիկ զրոյցի ընթացքում վերջիններս գրեթէ չեն խորշում այս անունից։ Բառը վկայուած է նաեւ հայկական մի շարք ասոյթներում եւ դարձուածքներում, որոնց մէջ արտացոլուել է նախկինում մեզանում առկայ հայ-բոշաների զգացմունքային՝ յաճախ չարդարացուած քամահրական ընկալումը լոկ՝ մեծ մասամբ պայմանաւորուած անցեալում վերջիններիս կողմից հասարակական նուերապետութեան ստորին աստիճանները զբաղեցնելու հանգամանքով³¹։ Դրանցից են․-

Էկա՛վ փաշի պէս, գնաց բօշի պէս; Դու փաշա, յէս բօշա, քարեկամացանք, քարեքարացանք; Գյաղէն քեզ՝ բօշէն փաշա չի դառնա; Ինքը բռշա, փաշին էլ հաւան չի; Բօշից տէրդէր չի եղնի; Բօշի երեսին թըքէս, կասի անծրեւ ա գալիս; Բօշի յուղը, վօր շատ եղաւ, քամակին ա քըսում; Բօշին մաղը չի գալիս, մէզ էլ ...[այսինչ իրը]; Մի օր բօշա՝ մի օր փաշա; Բօշի թագտը է դառէ; Բօշի պէս խօսքը ջերն ա; Բօշի պէս թըրէւ ա գալի; Բօշի երես ունի, բօշի տոպրակից ընգած (աներես); բօշի երիկ (ծուլլ); բօշի կնիկ կը վաստակի, բօշի երիկ մտած կուտի; Կողքա քարը շուշա է, միջի մարդը բօշա է եւն³²:

Ուշագրաւ է, որ Շատախի բարբառում բռշայ, իսկ Ռշտունիքում բժշահի բառերը, բոլորովին կորցնելով իրենց ցեղանունական կիրառութիւնը, երկրորդական խմաստային զարգացման արդիւնքում բացառապէս նշանակում են «Թափօր, ամբօխ, բազմութիւն», հմմտ.

Բաթմանա Բուղէն դուռ իբաց, մայեց դաշտի մէջ՝

Բռշա՞յ ի, մա՞րդ ի եղ կողմէ կու գան.

Բաթմանա Բուղեն ասաց.

«Ես ի՞նչ բռշայ ի, եսպէս կը գա.

Վոր ասեմ՝ ըխտավո՞ր ի, ըխտավոր չի՛.

Յես պիտի դուռ խփեմ: ... »³³:

Շատ կ'երթան, քիչ կ'երթան, կ'իմեն տնշտի մ' մեջ:

Մուղդար ըմ կ'երթան, կը խեն՝ ենտեղ քաղաք ըմ կա;

Ետ քաղքից բժշահի մ' կը տա տուս:

Կը գն՝ մըչ տնշտին, կը տննոնա կ'երթա:

Ենոնք ել կ'երթան, մախրոթք ռաստ կը գն՝ ենոնց:

Կը խարցնեն, կ'ասեն. — Եսիկ ի՞նչ բժշահի յեր³⁴:

Մշոյ դաշտում բռշայ մականունն են տուել գուռնա կամ դհոլ նուագողներին՝³⁵։ Հաւանաբար, յիշեալ երաժշտական գործիքներ նուագելու մենաշնորհը, ըստ հայկական աւանդական աշխարհայեացքի համարուելով անպատուարեր զբաղմունք, պատկանելիս է եղել գնչուներին ընդհանրապէս եւ հայ-բռշաներին՝ մասնաւորապէս՝³⁶։

Վայ-բռշաների համար որպէս անուանում սակաւ դէպքերում կիրառուում էին/են մաղագործ, հայ մաղագործ, մաղագործ հայ եգրերը, որոնք, անշուշտ, արդիւնք են վերջիններիս մաղագործութեան արհես-

տով եւ ընդհանրապէս հիւսածոյ իրերի (կողով, գամբիւղ, սալայ եւն.) արտադրութեամբ զբաղուելու: Հայ-բոշաները յաճախ գերադասում են ոչ բոշային ներկայանալ հենց այս անունով: Հետաքրքիր է, որ ղեռեւս վանցեանը, նկատելով յիշեալ հանգամանքը, գրում է. «Մաղագործ» անունը սակաւածանօթ է եւ վերցրած է մոցա պարապմունքից - արհեստից: Այդպէս եմ անւանում իրանց բոշաների մէջ հասկացող պատասէրները միայն, որոնք խորշում են բոշա արհամարհական, մասամբ մաւն մախատական անունից: «Մաղագործ» եմ կոչում մոքա մաւն մեր հոգեւոր գործերում, որպիսիք են պսակ, կնունք եւ այլն, երեւի բոշաների պատասխրութիւնը չվիրատրելու համար»³⁷:

ՅԱՊԱԻՈՒՄՆԵՐ

ադբ. — աղբերջաներէն,

արբ. — արարերէն,

բրբռ. — բարբառային,

դաս. — դասական,

դոմ. — դոմարի (մերձաւորարեւելեան գնչուների լեզուն),

թրք. — թուրքերէն,

լոմ. — լոմաւրէն (հայ-բոշաների գաղտնալեզուն),

հյ. — հայերէն,

հնդ. — հինդի,

յուն. — յունարէն

պգնչ. — պրոտոգնչուերէն,

պկր. — պրակրիտ,

պրս. — պարսկերէն,

ռոմ. — ռոմանի (արեւմտեան գնչուների լեզուն),

ռուս. — ռուսերէն,

սկր. — սանսկրիտ,

քրդ. — քրդերէն,

օսմ. — օսմաներէն

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Գնչուների գաղթի ժամանակաշրջանի, ալիքների եւ ուղիների վերաբերեալ առկայ է մեծածաւալ գրականութիւն, որի ամփոփ տեսութիւնը ներկայացուած է՝ I. F. Hancock, "The Development of Romani Linguistics", in *Languages and Cultures. Studies in Honor of Edgar C. Polomé*, M. A. Jazayeri & W. Winter (eds.), էջ 183-223, Berlin-

- New York-Amsterdam: Mouton de Gruyter, 1988; Այն, որ ներկայիս գնչուների արեւելքից դէպի արեւմուտք գաղթի ուղին անցել է Պատմական Հայաստանի տարածքով վկայում են մօտ 50ի հասնող Հայերէն փոխառութիւնները ուսմանիւմ արեւմտեան գնչուների լեզուում: Գնչուներէնում Հայերէն փոխառութիւնների խնդրի վերաբերեալ նորագոյն գրականութիւնից տե՛ս՝ N. Boretzky, "Armenisches im Zigeunerischen (Romani und Lomavren)", *Indogermanische Forschungen*, 1987, 100, էջ 137-155; I. F. Hancock, "Il contributo armeno alla lingua romani", *Lacio Drom*, 1987, 23(1), էջ 4-10:
- 2 Այս յօդուածում մենք զործածում ենք Հայ-րոչայ եղբր՝ տուրք տալով ԺԲ. դարավերջի Հայալեզու գիտական գրականութեան աւանդույթին (Վ. Փափագեանց, *Հայ-րոչայներ (Ազգագրական Ուսումնասիրութիւն)*, արտատպած *Ազգագրական Հանգէսից*, Թիֆլիս, 1899, տպարան Մ. Դ. Ռոտինեանցի; Գ. Վանցեան, «Հայ Բոչայներ», *Մուրճ*, 1892, N 7-8, էջ 1047-1064; N 9, էջ 1310-1321) եւ ցանկանալով չեշտել այս Հանրոյթի ներկայումս Հայ ժողովրդի անբակտեյի մաս Հանդիսանալու Հանգամանքը:
 - 3 Հրաչեայ Աճառեան, *Հայերէն Արմատական Բառարան*, Հտ. 1, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակութիւն, էջ 568: Իմաստային զարգացման Համար Աճառեանը դնում է ուսու. nemets «գերմանացի»՝ nemoy «Համբ» բառը (էջ 567), սակայն աւելի յարմար է թւում արբ. բառ՝ 'ajam «իրանցի, պարսիկ»՝ յիմ «խօսել օտար առողջանութեամբ, թլուտ արարերէնով, կակազ լեզուով» արմատից:
 - 4 V. Voskanian. "Tsiganskii Element V Kurdsikh Plemenakh ("Nekotorie Voprosi Etnogeneza Kurdov)" (Գնչուական Տարրերը Քրդական Ցեղերի Մօտ. Քրդերի Ազգածագման Մի Քանի Հարցեր), *Iran & the Caucasus*, 1997, vol. 1, էջ 48:
 - 5 I. Shopen, *Istoricheskii Pamiatnik Sostoianii Armianskoi Oblasti V Epokhu Ee Prisoedineniia K Rossiskoi Imperii (Պատմական Յուշարժան Հայկական Մարզի Վիճակի՝ Ռուսական Կայսրութեան Հետ Միաւորման Ժամանակաշրջանում)*, Սանկտ Պետերբուրգ, 1852, էջ 538:
 - 6 Յունարէն ստուգարանութիւնը անհաւանական է թւում, քանզի Իրանում գնչուներին տրուող անուանումներից ունենք zangana ձեւը, որը բնականաբար չէր կարող փոխ առնուել յունարէնից (Voskanian, էջ 49): Այսուհանդերձ, հարկ է լիչել, որ այժմ Իրանում բնակուող zargar («սկերիչ») անունով գնչուների խումբը գոնէ, դատելով լեզուական տուեալներից, այստեղ է վերահաստատուել՝ տեղափոխուելով Բալկանեան թերակղզուց (F. Djonedi, "Romano-Glossar: Gesammelt von Schir-ali Tehranizade", *Grazer Linguistische Studien*, 1996, 46, էջ 31-59):
 - 7 G. L. Lewis, "Čingāne", in *Encyclopaedia of Islam* (Second Edition), 1979, 2, Leiden, Brill, էջ 40:
 - 8 Shopen, էջ 538:
 - 9 Մասնաւոր զրոյթի ընթացքում այս բառի գոյութեան վրայ մեր ուշադրութիւնը հրաւիրեց պրոֆ. Գառնիկ Ասատրեանը:

- 10 V. Minorsky, "Lölü," in *Encyclopaedia of Islam* (Second Edition), volume, 1979, 4, Leiden, Brill, էջ 817;
- 11 *Կեսարիայի Հայերի շրջանում այս բառի գործածութեան մասին մեզ տեղեկացրեց դոկտ. Յակոբ Ջաքերեանը*:
- 12 Արեւմտեան եւ կենտրոնական Թուրքիայում այս գնչուները յայտնի են նաեւ yörük, geygel, geygelli yörük, bolu çingene, kipti, carcar (H. Arnold, "Some Observations on Turkish and Persian Gypsies," *Journal of the Gypsy Lore Society*, 3th ser., 1967, 46, էջ 108; A. Caferoğlu, Geygelli Yörüklerin Kullandıkları. Anadolu Ağızlarından Toplamalar, VII Bölüm, İstanbul: Bühraneddin Basımevi, 1943, էջ 196; V. A. Gordlevskii, "Djardjari V Kone," *Izbrannii Sochineniia*, (Ջարջարները Գոնիայում), том III, *Istoriia i Kultura (Պատմություն Եւ Մշակութիւն)*, Մոսկուա, 1962):
- 13 Նշուած գաղտնալուծուն, որը Հայրոշաների նախկին հնդարիական լեզուի աղբատիկ մնացորդն է լոկ, ամբողջութեամբ կորցնելով սեփական քերականական ձեւերը եւ գործածելով հայերէնի հիմնականում Կարնոյ բարբառի, քերականութիւնը, այժմ պահպանել է բնիկ բառապաշարի մի մասը միայն, որը, սակայն, միակ վստահելի աղբատիկ է այդ հանրոյթի նախկին պատմութեան:
- 14 Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Հայ Կեսարիոյ, Տեղագրական, Պատմական Եւ Ազգագրական Ուսումնասիրութիւն*, հտ. Բ., Գահրէ, տպ. Յ. Փափազեան, 1937, էջ 1859:
- 15 Սիմէոն դպիր Լեհացի, *Միմէոն Դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն Եւ Յիշատակարանք*, ուսումնասիրեց եւ հրատարակեց՝ Հ. Ներսիս վ. Ակինեան, Վիեննա, Միխիլարեան տպարան, 1938, էջ 207-208:
- 16 Գրիգոր Դարանացի, *Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամայեսցույ Կամ Դարանացցույ, հրատարակեց՝ Մեսրոպ վ. Նշանեան, Երուսաղէմ, տպարան Առաքելական Աթոռոյ Ս. Յակոբեանց, 1915, էջ 487*:
- 17 Ջաքարեայ Գանաքեօցի, *Ջաքարեայ Սարկաւազի Պատմագրութիւն*, Վաղարշապատ, 1870, տպարան Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի, հտ. 1, էջ 56; հտ. 2, էջ 31:
- 18 Հեղինակի գրիչն պատկանող անխնամ եւ անկանոն գրութեամբ ինքնագիր օրինակը եւ սրա ընտիր գրաբարով խմբագրուած ձեռագիրը՝ մշակուած, հաւանաբար, ԺԸ. դ. Միխիլարեան միաբան Մատթէոս Եւդոկիացու կողմից, *Պատմութիւն Պատերազմացն 1721-1738 Թուրքի վերնագրի ներքոյ, հրատարակել է Հայր Սահակ Զեմեմեանը (տե՛ս Արքանաւ Երեւանցի, Պատմութիւն Պատերազմացն 1721-1738 Թուրք, պատրաստեց՝ Հ. Ս. Զեմեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977)*: Գրաբարեան խմբագրեալ տարրերակից Լէոյի արտագրած ձեռագիրը պատճէնը 1938ին յոյն վերնագրով լոյս է տեսել Երեւանում (տե՛ս՝ Արքանաւ Երեւանցի, *Պատմութիւն Պատերազմացն 1721-1738թ.*, աշխատասիրութեամբ՝ Թ. Աւդալբեկեանի, Երեւան, Արմֆանի հրատարակութիւն): Վերջինիս մէջ յանդիմանի չի նշուել 1937ի ստալինեան բռնութիւնների զոհ բանասէր Թադէոս Աւդալբեկեանի անունը, որի աշխատասիրութեամբ էլ առաջին անգամ գիտական լայն շրջանառութեան մէջ է դրուել այս երկը:

Ըստ մէկ ուրիշ ստուգարանութեան, բառը կարող էր հայերէնում փոխառուել աքքադերէն *bišu* կամ ասուրերէն *bu* «Հոտած» ձեւերից²³, որն անշուշտ անընդունելի է, թէ՛ ժամանակագրական, եւ թէ՛ իմաստային ու հնչիւնական զարգացման օրինաչափութիւնների տեսանկիւններից: Փորձ է կատարուել նաեւ այն յանգեցնել այժմ Աֆղանստանում գտնուող Հերաթ քաղաքի շրջակայ վայրերից մէկի անուանը²³, որն անհնար է, քանզի, ինչպէս տեսանք, հայ-բոշաները իրենց կոչում են *lom* եւ անհաւանական է, որ միայն հայերի կողմից նախկին այս գնչուներին տրուած յիշեալ ցեղանունը (*exoethnonym*) վերջիններս իրենց հետ բերած յինէին այսքան հեռուից: Ի դէպ, հենց ինքը՝ վարկածի հեղինակը, ստուգարանութիւնը զգուշաւորութեամբ բերում է հարցականի նշանով:

Յայտնուած կարծիքները, թէ բոշայ անունը պէտք է բխեցուի թուրքերէն *boş* «զուրկ, չունեւոր, դատարկ, իզուր» բառից²⁴, հարկ է համարել ոչ աւել քան արդիւնք ժողովրդական ստուգարանութիւն (folk-etymology)²⁵:

Իրենց՝ հայ-բոշաների մեջ բոշայ բառի ծագման մասին նոյնպէս տարածուած է վերջին տեսակէտը, ի ապացոյց որի պատմւում են մի քանի աւանդութիւններ, որոնք, ներկայացնում ենք ստորեւ՝ մեր կողմից գրի առնուած տարրերակների համար կիրառելով հայերէնում ընդունուած բարբառագիտական տառադարձութիւնը.

Աւանդութիւն Ա.

Մի մեծ հրաւերքի գնացել են բոլոր ազգութիւնները, երբ սրանք տեղաւորւել պրծել են, մոր եկել են լոմերը [հայ-բոշաները], սակայն տեղ չէ եղել, եւ սրանք պատասխանել են, թէ պոշ ա, պոշ ա (իզուր է, իզուր է), գնացէք²⁶:

Աւանդութիւն Բ.

Էս մեր լոմաւները [հայ-բոշաները], օր էն ժամանագները տուն-տեղ չունէյին, գեղերը պղղղդէյին գու, մաղ, սալա ծախէյին գու, հիրամծ ունեցած-չունեցածն է մէ էշի՛մ բէռ էր, ժողովուրտն է, օր գ՛աշէր, գ՛ըսէր. «Բօշ ա, բօշ ա», յամի՛ դարտագ է, հեճ բան չունի, խէղջ է, ըշտը, իղօր համար է մէգի բօշա գ՛ըսէն (Ոսկանեան):

Աւանդութիւն Գ.

Լօմավոյիքը [հայ-բոշաները], օր հընգած մաղ գու ծախէյին, մարտիկն ա հարծնէյին գու. իղի գօրծի մէճը յամի փարա գա՞, օր ծախիք

գու: Իսօնք ա գ'ըսեն. «Չէ', օղու, բօշ ա, դարդագ, միսյա փէշագ է (Ոսկանեան):

Աանդոութիւն Դ.

Ասված, օր բիտում ազգերը կանճէ գու մօղը, օր ամեն մեզին գործ'ըմ տա, էս մէր լծմավդիքը [հայ-բոշաները] գըլըր ավելու [թափառելու, թափառելով ապրանքափոխանակութեամբ կամ առեւտրով զբաղուելու] էլին գընածէ, մինճէվ վըրա հասան, ըշտը, փէշագ չէր մընածէ: Յալվար էղան, ըսին. «Ասված ջան, մենկ է հայ-քրիստոնյա յենք, բան'մ է մեզի տու, աքրինկ»: Ասված մաղ շինելը իսօնճ տըվէժ, բօշէքն է խայսատ ունին' մէ քիճ'մ բօղօկվան, ըսին. «Բօշ ա, աքրել չի էղնի»: Բայժ դէ մինճէվ հըմի է մաղ շինէնք գու, ծախինք գու, կ'աքրինք: Ասճու տըված փէշագ է, գօյ էնք: Ըշտը, իդօր համար է մեզի բօշա կ'ըսէն (Ոսկանեան):

Մեր կարծիքով սակայն, բառն աւելի հին է քան ԺԵ. դարի սրա առաջին գրաւոր յիշատակումը³⁷ եւ, հաւանաբար, պէտք է դասուի բնածայնական կամ, աւելի ստոյգ, հնչախմաստային (ideophonic) ծագման անունների շարքին: Ըստ երեւոյթին, հայի ականջին խորթ է հնչել Հայաստան մուտք գործած հնչուների լեզուում ր եւ չ հնչիւնների յաճախակի եւ միաժամանակեայ արտաբերումը, որի հետեւանքով էլ վերջիններիս սկսել են տալ բոշայ անունը: Որպէս տիպարանական գուգահեռ կարելի է յիշել զազայ (այսինքն՝ զ հնչիւնը յաճախ արտասանող) ցեղանունը, որը քրդերի կողմից այս ժողովրդին տրուած, ինչ-որ առումով, նաեւ քամահրական անուանում է, արդիւնք՝ զազայերէնում հպաշփական ձ, ց բաղաձայնների առկայութեան, որոնք անյարիր են հարեւան քրդերէնի հիւսիսային բարբառներին եւ ընկալւում են որպէս գ:

Յատկանշական է սակայն, որ հայ-բոշաների գաղտնալեզուի բնիկ հնդարիական բառապաշարում բոլորովին բացակայում է չ հնչիւնը: Սանսկրիտեան ճ եւ հ սուլաչհականները լոմաւրէնում բացառապէս արտացոլուած են որպէս սուլական s; օր.՝ սկր. *daśa* - «տաս» > պկր. *dasa* > լոմ. *las*, դոմ. *das*, ռոմ. *deš*; (հմմտ. նաեւ՝ հնդ. *das*), սկր. *mānusa* «մարդ, տղամարդ» > պկր. *manusa* > լոմ. *manus*, դոմ. *manus*, ռոմ. *manuš* (հմմտ. նաեւ՝ հնդ. *mānus*) եւն.:

Պրոտօգնչուերէնը, ամենայն հաւանականութեամբ, սանսկրիտեան ճ, հ բաղաձայնների պարագայում դրսեւորում էր, կարելի է ասել, արխայիկ յատկանիշներ՝ արտացոլելով սրանք որպէս *š: Այս է ապացուցում սանսկրիտեան ճ, հ սուլաչհականների դիմաց ռոմանիի ճ չհականը, որը չի կարելի դիտարկել որպէս սկր. ճ, հ > պգնչ. *s > ռոմ. š երկրոր-

19 Երևանցի, 1977, էջ 26-30: Հատուածը մէջբերուած է ըստ ինքնագրի տեքստի: *Խմբագ-*

րեալ տարրերակում նոյն այս մասը ներկայացուած է հետեւեալ կերպ. «Վարդապետ ո՞մն էր ի քաղաքի անդ Գրիգոր անուամբ. սա մտեալ ի վանս սրբոյն Սարգսի, որ ի Չորագիւղ անուանեալ թաղի անդ է. գրագծութիւն ժողովրդեանցն հայոց կոչեալ ժողովեաց յայն վանս. ... Եւ խորհեալ հաստատեցին ի մէջ իրեանց առնել զոր կարելու տեսամէին ի փրկութիւն անձանց իրեանց եւ զաւակացն: Ի քաղաքի անդ ի տեղիմ, որ Կոմնի թաղ անուանիւր, էին քրիստոնեայ բօշայք, Դ [=100] տում, մեծատումք եւ քաջասիրտք, վարժք զիմու պատերազմի: Եւ մոցա զվխաւորք ի ժամանակին յայնմիկ էին տքա. առաջիմն էր պարոն Ղազարոսն Բարտրեան, երկրորդն էր պարոն Կիլոյզմ, երրորդն էր պարոն Դաւիթն, չորրորդն էր պարոն Բէյրամն, եւ հիմնգերորդն էր պարոն Պետրոս: Սորա եւ այլքն առհասարակ կոչեցեալք՝ եկին ժողովեցան առ Գրիգոր վարդապետն: Յայնմ ժողովուրդքն վարդապետիմ հանդերձ լալագին աղաղակեցին առ մոտա յօգնութիւն հասնել ...: Պատասխանի ետ Ղազարն եւ ասի ցվարդապետն. «Վարդապետ, ահաւասիկ ես զերկու հարիւր քաջամարտիկ երիտասարդս ունիմ, որոց ամենքեան ունին զգէմս եւ վարժք եմ սրոյ եւ հրացանց արծակելոյ, զմոտա ես ժողովեցիք եւ մորօք հանդերձ ոգւով չափ պատերազմեցայք: ... «Ազդ եղիւ բօշայիցն, որք յայլ թաղս կային, եկին հասին անդ երեք հարիւր միանգամայն եւ մարտ եղեալ սրով եւ թվանգաւ՝ յաղթեցին բշմամեաց խնամօքն Աստուծոյ ...: ... Յայնմ մուգի չորեք հարիւր սպառազներ ի հայոց ամտի եւ քառասուն բօշայք եղին խոցք եւ անկան ի մահիմս, այլ ոչ մեռան» (Երևանցի, 1977, էջ 101-104): Ուշագրաւ է, որ Երևանեան Հրատարակութեան մէջ բօշայք ձեւին զուգահեռ սարդեյ է նաեւ փօշայք գրութիւնը, որի վրայ յատուկ ծանօթագրութեամբ ուշադրութիւն է հրաւիրել Հրատարակիչը (Երևանցի, 1938, էջ 16; ծանօթ. 2): Այն, անշուշտ, արդիւնք է արեւմտահայ արտասահմանեան եւ հետեւանք՝ Լէոյի կողմից բնագրում առկայ ձեւի ոչ-ճշիւր ընդօրինակման:

20 Ահա, թէ այս մասին ինչ է գրում Հայր Ղեւոնդ Ալիշանը իր նամակներից մէկում՝ ուղղուած Գրիգոր Վանցեանին. «յայտ է, որ հին չէ բոշայից անունն, այլ ծագումն ինձ անյայտ. մենք սովորաբար զնչու կ'անանենք՝ ինչ, որ թուրքք չինկեանէ կ'ըսեն եւ եւրոպացիք ծինկանի, ծինկարի եւ այլ ասոցն մնան անանք» (Վանցեան 1894, էջ 1068): Քերովրէ Պատկանեանին եւս այս անուան ծագումն անյայտ է (K. Patkanov, Tsigani. Neskolklo Slov O Narechiakh Zakavkazskikh Tsigan: Boshia I Karachi (Քննու-նելք. Մի Բանի խօսք Անգրիկովկասեան Քնչուների Բարբառների Մասին, Բոշաներ Եւ Հարաչիներ), Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 73):

21 R. Turner. *A Comparative Dictionary of the Indo-Aryan Languages* (Second Impression), London: Oxford University Press, 1973, էջ 832:

22 Ն. Մկրտչեան, Բառերի Կենսագրութիւնից, Երևան, 1999, «Ապագայ» Հրատարակչութիւն, էջ 24:

23 Arnold, 1987, էջ 108: Ծառօք, Anastasi յօդուածին (Father Anastas, "The Nawar or Gypsies of the East," *Journal of the Gypsy Lore Society*. 1914/15, 3rd series, volume 7, էջ 298-319; volume 8, էջ 140-163; 286-281) այդպէս էլ անհնար եղաւ ձեռնհաս լինել, եւ յիշեալ հեղինակի կարծիքին մենք ծանօթ ենք միմիայն Arnoldի միջնորդութեամբ:

- 24 Փակագրեանց, էջ 30: Հայաստանի Հանրապետութեան Ազգային Փոքրամասնութիւններէ Այսօր, (ՀՀԱՓԱ) հտ. 1, խմբ. ԵՈւ. Մկրտումեան, Երեւան, 2000, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, էջ 97:
- 25 Ի դէպ, դեռեւս Լալայեանը կասկածով է մօտենում յիշեալ ստուգարանութեանը (Ե. Լալայեան, Հայ Բոշանք, Երկեր, հտ. 1, կազմ. եւ ծանօթ. Կ. Վ. Մելիք-Փաշայան եւ Ա. Մ. Նազինեան, Երեւան, 1983, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, էջ 80):
- 26 Լալայեան, էջ 89:
- 27 Այս է վկայում նաեւ այն փաստը, որ, թէ՛ Շարահնոցի Հեղինակը, եւ թէ՛ Արրահամ Երեւանցին Հարկ չեն համարում լրացուցիչ կերպով բացատրել այն, ելնելով, հաւանաբար այն շանգամանքից, որ յիշեալ ցեղանունն արդէն քաջածանօթ է ընթերցողին:
- 28 Նախքան Բալկաններով Եւրոպա անցնելը ներկայիս արեւմտեան գնչուների նախնիները, ինչպէս արդէն ասուել է, երկար տասնամեակներ կամ, գուցէ, առնուազն մէկ հարիւրամեակ բնակուել են Հայաստանում: Մինչդեռ, խնդիրը, թէ՛ արդեօ՞ք Հայրոշաների եւ արեւմտեան ու մերձաւորարեւելեան գնչուների նախնիները Հնդկական թերակղզուց դուրս եկած միեւնոյն կամ տարբեր գնչուական գաղթականութեան ներկայացուցիչներ են, ցարդ մնում է չլուծուած: Մի բան սակայն վերջնականապէս պարզ է. մերձաւորարեւելեան գնչուների նախնիները, ի տարբերութիւն առաջին երկուսի, երբեւիցէ չեն եղել Հայաստանում:
- 29 Այս առումով ուշագրաւ է A. Colocciի եւրոպական գնչուներին նուիրուած Gli Zingari: Storia d'uno popolo errante (Գնչուները. Թափառական Մի Ժողովրդի Պատմութիւն) աշխատութեան առանձին հատուածների թարգմանութիւնը «Բոշանք» վերնագրի ներքոյ (տե՛ս՝ Մուրճ, 1890, N 10):
- 30 Հմմտ.՝ Ապտիան՝ Թուրք բոշայ անուանումը, որը Սրուանձտեանցը գործածում է Աբդիան անունով յայտնի՝ Սեբաստիայի Թուրքական գնչուների՝ չինգենէների առնչութեամբ (Գ. Սրուանձտեանց, «Թորոս Աղբար Հայաստանի Ճամբորդ», (մասն առաջին). Երկեր, հտ. 2, պատ., ծանօթ. եւ խմբ. Վ. Բդոյեան եւ Է. Ա. Կոստանդեան, Երեւան, 1982, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, էջ 259):
- 31 Հայաստանի տարբեր վայրերում բոշաների կապակցութեամբ տարածուած են որոշ անոտիապաշտութիւններու Գամիւրքում հաւատում են, որ եթէ բոշայի մը յետոյքին մատող դպցնես - ձեռքդ սուր կ'առնէ, ձեռքիդ ափը հետանաքար կը դառնայ» (Վ. Թեմառեան, «Գամիւրքի Հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)», Հայ Ազգագրութիւն եւ Բանահիւսութիւն (Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ), գիրք 1, Երեւան, 1970, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, էջ 194), իսկ Զաւախքում «փողոցներում երեխաները վազում կամթում են նրանց [բոշաներին], որպէսզի իրենց դանակները սրանան» (Լալայեան, էջ 91):
- 32 Ոսկանեան Վ. 1998-2001ին Հայաստանի եւ Վրաստանի Հայրոշաների ուսումնասիրութեան ընթացքում հաւաքուած դաշտային նիւթեր (ձեռագիր): Հայոց Լեզուի

- Բարրառային Բառարան*, հտ. Ա., գլխ. խմբագիր՝ Ա. Սարգսեան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, Երեւան, 2001, էջ 210:
- 33 *Սասնայ Մուկ*, խմբագրեց Մ. Արեղեան, աշխատակցութեամբ՝ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1936, Պետական հրատարակչութիւն հտ. Ա., էջ 738:
- 34 *Թոստամ-Ջայ*, (*Ճիզդուսի Բանաստեղծի Մենդեան 1000ամեակին Նուիրուած Ժողովածու*), խմբ. եւ առաջ. Կ. Մելիք-Օհանջանեան, Երեւան, Պետհրատ, 1934, էջ 181:
- 35 *Սասնայ Մուկ*, պատրաստեցին Ս. Յարութիւնեան եւ Ա. Սահակեան, հտ. Գ., Երեւան, 1979, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, էջ 152:
- 36 *Յատկանշական է, որ Արեւմտեան Հայաստանի տարածքներում գուռնա, դափ եւ դհուլ, իսկ որոշ վայրերում նաեւ քամանչա նուագելը խիստ ամօթարեր է դիտուում նաեւ քրդերի շրջանում* (Voskanian, էջ 49): *Նաեւ հայերէն գուռնաչի, որը քամանչա-րարար կիրառուելիս ընդհանրապես նշանակում է «անպատուները զրազմունքի տէր, ոչ լուրջ գործով զրազուող»:*
- 37 *Վանցեան Գ., «Պատմական Ակնարկ Բոշաների Անցեալից», Մուրճ, 1894, N. 7-8, էջ 1067:*

SOME FEW COMMENTS ON THE WORD BOSHAY (Summary)

VARDAN VOSKANIAN

Part of the gypsies. who lived originally in the northeast of the Indian Peninsula, left this region in the early centuries of the first millennium A.D., settled on the Armenian Plateau in the 11th-12th centuries were gradually integrated into the Armenian people. However, the existence of gypsies among the Armenians led to the enrichment of the Armenian language with new words related to the former ethnic group.

Vardan Voskanian selects all the words with such connotations that can be found in the Armenian literary language, as well as in the various Armenian dialects. He discusses the etymology and semantics of these words. The oldest of these words is boshay, which is mentioned in writing as early as 1597. The other words discussed by Voskanian are the following: gncchu, taparakan, hay-boshay, maghagorts-boshay, metreb/merteb, jingian/jengian/jiengiana/chinkiane, gharachi, lorik, abdal/avdal, lom and dom.